ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի հյուրանոցներում բնակվելու ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՍԿԿ-ԳՀԾՁԲ-25/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.09.2025թ. ժամը 11-00-ին, «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ վարչական շենքում, ք. Երևան, Հ.Մանանդյան փ. 41 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Գասպարյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հրաչ Արևշատյանը, Վաղարշակ Շահնազարյանը, Վաղինակ Պիվազյանը, Արմեն Զարգարյանը,
և քարտուղար Մարինե Մուրադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՍԿԿ-ԳՀԾՁԲ-25/12» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	Կազմակերպության	
	անվանումը	հասցեն
1	«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը համապատասխանում է հրավերի պահանջներին:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

ՀՀ դրամ

Չափաբաժինների		*Չափաբաժնի անվանումը*
համարները	*պլանավորված գին*	
1	560000	հյուրանոցներում բնակվելու ծառայություններ

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	466667	93333	560000

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները /ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով/, որի հիման վրա որոշեց՝

1. Ընթացակարգի **ընտրված մասնակից** ճանաչել «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամին՝ որպես բավարար գնահատված և ամենացածր գին առաջարկած մասնակից:
2. 'Գնումների մասին' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն անգործության ժամկետ չի հայտարարվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Տիգրան Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հրաչ Արևշատյան

_____ Վաղարշակ Շահնազարյան

_____ Վաղինակ Պիվազյան

_____ Արմեն Զարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան